

2014թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՍԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄՐՑՈՒՅԹԻ
ՀԱՂԹՈՂ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեմայի անվանումը

Մաքսային միության ընդլայնումը որպես անդամ երկրների մրցունակության
բարձրացման գործոն. Հայաստանի Հանրապետության և Բելառուսի օրինակով

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը

1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.07.2014թ. - 31.12.2014թ.

Թեմայի ղեկավարը

Մարգարյան Ատոմ Շավարշի
տ.գ.թ., դոցենտ

Թեմայի մասնակիցներ

1. Գալոյան Դիանա Ռոբերտի - տ.գ.թ., դոցենտ
2. Պետրոսյան Արսեն Լյուդվիգի - տ.գ.թ., դոցենտ
3. Ղարիբյան Հասմիկ Մարատի – ասպիրանտ

Ծրագրի համառոտ բովանդակությունը

Հետազոտական նախագծի նպատակն է ուսումնասիրել Երասիական տնտեսական միությանը և Մաքսային Միությանը (ՄՄ) Հայաստանի Հանրապետության անդամակցության նախադրյալներն ու հիմնապայմանները ու դրանց հիման վրա գնահատել ՀՀ տնտեսության վրա այդ գործընթացի հնարավոր կարճաժամկետ (ստատիկ) և երկարաժամկետ (դինամիկ) ազդեցությունները, ելնելով ՀՀ տնտեսության գերակա շահերից ու զարգացման առաջնահերթություններից՝ մշակել ԵՏՄ ընդլայնման ուղղությունները և դրանց օպտիմալացման սոցիալ-տնտեսական մեխանիզմները՝ որպես անդամ երկրների մրցունակության բարձրացման գործոն:

ԵՏՍ և Մաքսային Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցումը պահանջում է այդ գործընթացի հետ կապված բոլոր հնարավոր ռիսկերի ու հետևանքների համակողմանի ուսումնասիրություն և դրա հիման վրա Մաքսային Միության շրջանակներում ինտեգրացման օպտիմալ մեխանիզմների ու հանձնարարականների մշակում, որի նպատակը պետք է լինի տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացումը:

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

Հաշվետու ժամանակահատվածում (01.07.2014-31.12.2014) հայ-բելառուսական համատեղ հետազոտական խումբը կոորդինացված աշխատել է հետևյալ հարցերի ուսումնասիրության և մշակման վրա.

- Ժամանակակից աշխարհում Մաքսային և տնտեսական միությունների սոցիալ-տնտեսական բնույթի ու գործողության մեխանիզմների բացահայտում:
- Անցումային փուլում գտնվող և տնտեսաքաղաքական համակարգափոխություն իրականացնող երկրների մաքսային կազմավորումների ձևավորման տեսամեթոդական հիմքերի պարզաբանում և հստակեցում:
- ԵՏՍ և Մաքսային Միությանը անդամակցության պայմանների գնահատում ՀՀ արտաքին պարտավորությունների տեսակետից (ԱՀԿ, Եվրամիություն, երկկողմ պարտավորություններ և այլն):
- ԵՏՍ և Մաքսային Միության կազմավորման սոցիալ-տնտեսական բնույթի և առանձնահատկությունների վերլուծություն (Առևտրի ստեղծման ու առևտրի շեղման գնահատումները):
- Նոր անդամների հաշվին ԵՏՍ և Մաքսային Միության ընդլայնման գործընթացի վերլուծություն:
- Մաքսային Միությանը ՀՀ անդամակցության հիմնախնդիրների վերլուծություն:
- Հայաստանի Հանրապետության ներգրավման հետևանքով Ռուսաստանի Դաշնությունը, Բելառուսի Հանրապետությունը և Ղազախստանը ընդգրկող մաքսային միության ընդլայնման անդամ երկրների տնտեսությունների վրա այդ գործընթացի ազդեցությունների գնահատում:

ԵՏՍ և Մաքսային միության անդամ դառնալու պարագայում՝ Հայաստանի Հանրապետությունը հետաքրքրված է իր տնտեսական համակարգի մրցունակության բարձրացման և այդ անդամակցության տնտեսական էֆեկտների ու ազդեցությունների գիտականորեն հիմնավորված գնահատման մեջ: Անհրաժեշտ է մշակել համաձայնեցված ու գիտականորեն հիմնավորված մոտեցումներ ու փոխադարձորեն ընդունելի լուծումներ՝ Մաքսային Միության շրջանակներում ազգային շահերի առավելագույն հաշվառման վրա հիմնված մեխանիզմների ձևավորման համար:

Այդ կապակցությամբ նախագծի հայկական կողմի մասնակիցները ուսումնասիրել են համաշխարհային փորձը և ինտեգրացիոն միավորումների անդամ-երկրների ձեռնարկությունների գործունեության պետական կարգավորման գործածվող մեթոդները, ինչպես նաև տնտեսության ազատական կառավարման

մրցունակության համեմատականը». **Հայաստան. Ֆինանսներ և Էկոնոմիկա ամսագիր**. N 11-12. (171-172). 2014 թ.:

5. **Մարգարյան Ա., Սոլոդովնիկով Ս., Պետրոսյան Ա., Ղարիբյան Հ.** – ՖԵՎրասիական տնտեսական միության անդամակցության հնարավոր ազդեցությունները տնտեսության արտահանման հատվածի վրա»: ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու: Եր, «Անանիա Շիրակացի» հրատ., (Տպագրության ընթացքի մեջ է):
6. **Մարգարյան Ա., Սոլոդովնիկով Ս., Պետրոսյան Ա., Ղարիբյան Հ.** - Ներմուծման կառուցվածքի հնարավոր տեղաշարժերը ԵՏՄ անդամակցության պայմաններում ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու: Եր, «Անանիա Շիրակացի» հրատ., (Տպագրության ընթացքի մեջ է):

ՀՊՏՀ և ԲՄՏՀ համատեղ վերլուծությունների հիման վրա հրապարկումներ են նախապատրաստում նաև ծրագրին մասնակցող բելառուսական կողմը, որոնց լույս կտեսնեն 2015թ. առաջին կիսամյակում:

Հետազոտական ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների որոշ արդյունքներ ներկայացվել ու զեկուցվել են ՀՊՏՀ «Զարգացման ժամանակակից մարտահրավերները» թեմայով 2014թ հոկտեմբերին կայացած 24-րդ գիտաժողովում: Գիտաժողովի ընթացքում ներկայացվել են հետևյալ **համատեղ զեկույցները**.

1. **Մարգարյան Ա., Սոլոդովնիկով Ս., Պետրոսյան Ա.**- Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հնարավոր օգուտներն ու ռիսկերը:
2. **Գալոյան Դ., Քսենզովա Վ.**- Մաքսային միության ընդլայնման կարճաժամկետ էֆեկտների գնահատման հարցի շուրջ: